# Համաձայնագիր-1
# 18.02.2021թ. կնքված N ՊԵԿ-ԲՄԾՁԲ-20/5 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

**ք. Երևան** «04» մարտի 2021թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի մի կողմից, և «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամը, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս տնօրեն՝ Մ.Մուրադյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 18.02.2021թ. կնքված N ՊԵԿ-ԲՄԾՁԲ-20/5 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

**Կողմերը որոշեցին՝**

1.1. Պայմանագրի 7.13 կետին համապատասխան հաստատել Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:

1.2. 18.02.2021թ. կնքված N ՊԵԿ-ԲՄԾՁԲ-20/5 ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2021 թվականի փետրվարի 18-ից ծագած փաստացի հարաբերությունների նկատմամբ:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

ք.Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Է.Գևորգյան

**ԿԱՏԱՐՈՂ**

«Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամ
ք. Երևան, Սևաստոպոլյան 45
ՀՎՀՀ 00090751
Հ/Հ 2050022433141001
«Ինեկոբանկ» ՓԲԸ

«Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի տնօրեն՝

Մ.Մուրադյան

Հավելված
Հաստատված է
«18» փետրվարի 2021թ. կնքված
N ՊԵԿ-ԲՄԾՁԲ-20/5 գնման պայմանագրի փոփոխությամբ

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ***

**ՀՀ դրամ**

| Հ/Հ | Ծառայության անվանումը | Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը* | Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | Մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը | Ընդամենը Տարի |
| 1 | ՀՀ ՊԵԿ մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայություններ | 4232 | | 13 333 333 | 13 333 333 | 33 333 333 | 33 333 333 | 33 333 333 | 53 333 333 | 53 333 333 | 53 333 333 | 80 000 000 | 80 000 000 | 80 000 000 | **80 000 000** |

*Վճարման գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ պետական եկամուտների կոմիտե

ք.Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Է.Գևորգյան

**ԿԱՏԱՐՈՂ**
«Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամ
ք. Երևան, Սևաստոպոլյան 45
ՀՎՀՀ 00090751
Հ/Հ 2050022433141001
«Ինեկոբանկ» ՓԲԸ
«Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի տնօրեն՝

Մ.Մուրադյան